Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականի դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Նոր Երզնկայի միջնակարգ

Թեմա՝ Դասի Պլանավորում:ՈՒսուցման եղանակների ընտրության արդյունավետությունը «Շախմատ»առարկայի դասի պլանավորման ընթացքում

Վերապատրաստող, մենթոր՝ Նարինե Մեսրոպյան

Ուսուցիչ՝ Հեղինե Անտոնյան

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն—----------3-4

Թեմա- Դասի Պլանավորում: ՈՒսուցման եղանակների ընտրության արդյունավետությունը «Շախմատ»առարկայի դասի պլանավորման ընթացքում:---5

Գլուխ 1-ին

Դասի պլանավորում—----------5-11

Գլուխ 2-րդ

Պլանավորման արդյունավետ եղանակների կիրառումը«Շախմատ» առարկայից:--12

Գործնական մաս----------21

Եզրակացություն—----------23

Գրականության ցանկ—----------24

Ներածություն

Դասը համարվում է մանկավարժական գործընթացի կարևոր բաղադրիչ: Դասի ճիշտ պլանավորումը կարելի է համարել ուսուցչի մասնագիտական որակներից մեկը: Դասի պլանավորման ժամանակ պետք է ուսուցիչն իր առջև ունենա հանրակրթության պետական չափորոշիչը /այսուհետ՝ Չափորոշիչ/ ելնում է կարողունակությունների հիման վրա հիմնված մոտեցումից և սահմանում է շրջանավարտներին ներկայացվող որակական պահանջները՝ ըստ կրթական աստիճանների /կարողունակություններ/կոմպետենցիաներ/ և ըստ կրթական աստիճանների ուսումնառության՝ ակնկալվող վերջնարդյունքներ: ՈՒնենա ձևավորված նպատակներ և գտնի այդ նպատակներին հասնելու ճիշտ ուղիներ: Դասը պետք է պլանավորել ելնելով ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքներից, փուլ առ փուլ և պլանավորման ժամանակ կարևոր է հաշվի առնել դասարանի և դասի թեմայի առանձնահատկությունները:

Աշխատանքի արդիականությունը՝ Ընտրված թեմայի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ մենք այս թեմայով ի ցույց ենք դնում դասի կազմակերպման կարևորագույն բաղադիրչի՝ դասի պլանավորման արդյունավետ եղանակների կիրառումը ուսումնական գործընթացում: ՈՒսուցչի առջև դրված կարևոր պահանջ է, որպեսզի իր ձեռք բերած նվաճումները, սերունդների կողմից ստեղծված և կուտակված գիտելիքները, կարողությունները, հմտություններն ու արժեքները արդյունավետ կերպով կարողանա փոխանցել նոր սերնդին, ուստի դասի պլանավորումը և համապատասխան եղանակների կամ մեթոդների առաջադրումը միշտ էլ կարևոր է և կարևոր կլինի ուսուցչի համար:

Աշխատանքի նպատակը՝Ներկայացնել դասի պլանավորման առանձնահատկությունները և ցույց տալ ուսուցման եղանակների կարևորությունը «Շախմատ» առարկայի դասավանդման ընթացքում:

Աշխատանքի խնդիրները՝ Աշխատանքի նպատակին հասնելու համար մեր առջև դրել ենք հետևյալ խնդիրները:

- ✓ Ներկայացնել դասի պլանավորման նշանակությունը դասի անցկացման գործընթացում:
- ✓ Ցույց տալ դասի պլանավորման արդյուավետ եղանակները և դրանց կիրառումը

- ✓ **Աշխատանքի կառուցվածքը՝** Աշխատանքը կազմված է ներածությունից, երկու գլուխներից, գործնական մասից եզրակացությունից և գրականության ցանկից:

Դասի պլանավորում: Ուսուցման եղանակների ընտրության արդյունավետությունը «Շախմատ» առարկայի դասի պլանավորման ընթացքում:

Գլուխ 1-ին Դասի պլանավորում

Դասը մանկավարժական գործընթացի բջիջն է: Մանկավարժության նշանակալի մասը ամբողջանում է դասի մեջ: Այն սովորողների կրթության, զարգացման և դաստիարակության խնդիրների լուծման համար պարբերաբար կիրառվող գործընթաց է, որոշակի ժամանակահատվածում ուսուցիչների հաստատուն կազմի և սովորողների գործունեության կազմակերպման ձև: Դասը միևնույն տարիքային խմբի կրթության կազմակերպման ձև է՝ կոնկրետ օրակարգով (դասացուցակ) և բոլորի համար միասնական կրթական ծրագրով: Այդ ձևում ներդրված են կրթական դաստիարակչական գործընթացի բոլոր բաղադրիչները՝ նպատակ, բովանդակություն, միջոցներ, մեթոդներ, կազմակերպման և ղեկավարման գործունեություն և դրանից բխող դիդակտիկ տարրեր: Յուրաքանչյուր դաս սկսվում է վերջնական նպատակի գիտակցումով և դրա ճշգրիտ, կոնկրետ սահմանումով, այնուհետև նպատակին հասնելու միջոցների հաստատմամբ և վերջապես նպատակին հասնելու մեթոդների սահմանմամբ[1]: Վերջին տարիներին հաճախ են հակադրում ուսուցման ավանդական և ինտերակտիվ մեթոդները, ուսուցչակենտրոն և աշակերտակենտրոն մոտեցումները: Ընդ որում՝ այդ հակադրումը կատարվում է այն համատեքստում, որ ինտերակտիվ և աշակերտակենտրոն մոտեցումները բացարձակապես լավն են, իսկ ավանդական և ուսուցչակենտրոն մոտեցումները՝ վատը: Այս մոտեցումը գիտականորեն հիմնավորված չէ: Ինտերակտիվ մոտեցումներն անհրաժեշտ են աշակերտներին մոտիվացնելու, ուսուցումը հետաքրքիր ու մասնակցային դարձնելու համար:

Բայց այդ ամենը չեն բացառում նաև ավանդական մոտեցումների օգտագործումը: Հարց ու պատասխանը, նյութը վերհիշելը, վարժանքները, ուսուցչի բացատրական խոսքը այսօր էլ կարևոր են ու անհրաժեշտ ուսուցման համար: Բացի այդ՝ ինտերակտիվ ուսուցումն ունի որոշակի ռիսկեր, որոնք անտեսել չի կարելի:

[1]Այվազյան Հ, Դասի կառուցվածքային տարրերի կիրառումը հանրակրթական առարկաների օրվա պլանների կազմման գործընթացում Եր. , 2014, էջ 2:

Հետևաբար՝ նոր մանկավարժության մեջ չպետք է լինեն մեթոդների և հնարների հակադրում: Բոլոր մեթոդներն ու հնարները ինչ-որ իրավիճակում կարող են օգտակար լինել: Ուսուցման մեթոդները հաճախ ընկալվում են որպես դեղատոմս: Երբեմն նշվում է, որ այս կամ այն մեթոդը կիրառելու դեպքում մենք կկարողանանք հասնել մեր նպատակին: Բայց մանկավարժության մեջ ընդհանրացված լուծումներ չկան: Յուրաքանչյուր դաս, յուրաքանչյուր դասարան տարբեր է: Մեկ դասարանում աշխատող մոտեցումը կարող է մի այլ դասարանում չաշխատել: Հետևաբար՝ ուսուցման մեթոդներն ու հնարները պետք է ընկալել որպես գործիքներ, որոնց կիրառման մասին որոշումը կայացնում է ուսուցիչը: Ուսուցման գործընթացի արդյունավետությունը մեծապես կախված է դասի ճիշտ պլանավորումից, որը կարելի է պատկերացնել հետևյալ հաջորդականությամբ՝ նախապատրաստական աշխատանքներ դասից առաջ, բուն դասը և վերլուծական աշխատանք, որը պետք է կատարել դասից հետո: Դասի կարևոր նախապայմանը դասին հանգամանալից նախապատրաստվելն է: Հիմք ընդունելով թեմատիկ պլանը՝ ուսուցիչը կազմում է օրացուցային պլանը, ուր ծրագրային նյութերը բաշխում է ուստարվա կամ կիսամյակի ամիսների, շաբաթների, օրերի վրա, նշում դրանց իրացման ժամկետները: Օրվա դասերի պլանում արտահայտվում են հետևյալ տարրերը՝ դասի անցկացման օրը, ամիսը, թվականը, թեմատիկ պլանում եղած նրա համարը, դասարանը, դասի կազմակերպման և անցկացման տեղը, թեմայի անվանումը, կրթական-դաստիարակչական և զարգացման խնդիրները, դասի կառուցվածքի բաղադրամասերը դասի իրար հաջորդող փուլերը, ըստ փուլերի՝ ժամանակի բաշխումը, ուսումնական նյութի բաղադրությունը, ուսուցչի և աշակերտների աշխատանքի ձևերը, դասի կահավորման միջոցները, տնային հանձնարարությունները[2]:

Դասի պլանը կազմելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ առանձին դասերի պլանավորված խնդիրները պետք է հանդիսանան ամբողջ ուսումնասիրվող նյութի ընդհանուր խնդրի բաղկացուցիչ մասը: Դասի ընթացքում բացահայտված գիտելիքների բաղադրիչները պետք է ապահովեն այս կամ այն ամբողջական խնդրի լուծման որոշակի մասը: Առանձին դասերի կոնկրետ խնդիրները պետք է դիտարկվեն մյուսների հետ փոխկապակցված: Դասի պլանը կազմելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ մտավոր գործունեության ակտիվությունը նյութի հետ ծանոթացմանը համաընթաց ավելանում է: Դասի պլանավորման ժամանակ պետք է հաշվի առնել ուսուցման մեթոդները, որոնք օգնում են դասն ավելի արդունավետ անցկացնելու

[2]Ամիրջանյան Յու, Սահակյան, Մանկավարժություն, Եր. , 2004, էջ 203:

համար:Ուսուցման մեթոդները նպատակ ունեն ապահովել կրթության բովանդակության որակյալ յուրացումը: Կրթության բովանդակությունը գիտելիքների, կարողությունների և արժեքների միասնությունն է: Ուսումնական աշխատանքի ճիշտ կազմակերպման, դրա արդյունավետության ու նպատակայնության համար ուսուցիչը, բացի իր մանկավարժական վարպետությունից և ուսուցման անհրաժեշտ պայմաններից, անպայման ձեռքի տակ պետք է ունենա տվյալ առարկայի պետական ծրագիրը, դասագիրքը կամ դասագրքերը և այդ առարկայի մեթոդիկան: Առանց դրանց վրա հենվելու, ուսուցիչը չի կարող ապահովել ուսուցման գործի ժամանակակից գիտամանկավարժական մակարդակը, ուստի այսօրվա դասը չի կարելի պատկերացնել առանց ծրագրի, դասագրքի ու մեթոդիկայի: Երբեմն նշվում է, որ այս կամ այն մեթոդը կիրառելու դեպքում մենք կկարողանանք հասնել մեր նպատակին: Բայց մանկավարժության մեջ ընդհանրացված լուծումներ չկան[3]: Սովորաբար պետք է հաշվի առնել, որ յուրաքանչյուր դաս, յուրաքանչյուր դասարան տարբեր է: Մի դասարանում աշխատելու ժամանակ մեր կիրառած մեթոդները կարող են հաջողությամբ պսակվել, բայց մեկ այլ դասարանում կարող է լինել նաև հակառակը, քանի որ հարկավոր է հաշվի առնել դասարանի առանձնահատկությունները:

Դասի ամենօրյա պլանավորումը դասի արդյունավետության հետ կապված մտահաղացումների արդյունավետ իրագործման հրամայականն է: Դասի պլանավորման բաղադրիչներն են՝

- Դասի թեման:
- Դասի նպատակները (կրթական, զարգացնող, դաստիարակչական):
- Դասի տեսակը (նոր նյութի յուրացման, ամրապնդման, գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգման, յուրացված նյութի համակարգման և ընդհանրացման):
- Դասի հիմնական փուլերին հատկացվող ժամանակի բաշխում:
- Դասի ընթացքը:
- Դասի հենքային հասկացությունների ձևավորման փուլերը (հասկացությունների ներմուծում, օրինակների ներկայացում, որոնցում կիրառված են այդ հասկացությունները, հասկացությունների էական և ոչ էական առանձնահատկությունների առանձնացում, էական առանձնահատկությունների վրա հիմնված հասկացությունների սահմանում):

[3]Խաչատրյան Ս. , Ուսուցման արդյունավետ հնարներ, Եր. , 2020, էջ 22:

- Դասավանդման մեթոդները՝ բանավոր (անհատական, համընդհանուր) կամ գրավոր (ինքնուրույն, ստուգողական աշխատանք, թելադրություն) հարցում, դասախոսություն, բացատրություն, խնդրահարույց բացատրություն, պատմվածք, զրույց, զրույցի տարրերով պատմվածք, տեղեկույթի աղբյուրների հետ ինքնուրույն աշխատանք, վարժություն, դերային խաղ, վարժությունների և խնդիրների կատարում սովորական կամ խաղային ձևով:
- Աշխատանքների ընդունում. սխեմայի կազմում, աղյուսակների հետ աշխատանք, դասագրքի տեքստի հետ աշխատանք, նկարագրությունների կազմում:

Դասի պլանը կազմելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ առանձին դասերի պլանավորված խնդիրները պետք է հանդիսանան ամբողջ ուսումնասիրվող նյութի ընդհանուր խնդրի բաղկացուցիչ մասը: Դասի ընթացքում բացահայտված գիտելիքների բաղադրիչները պետք է ապահովեն այս կամ այն ամբողջական խնդրի լուծման որոշակի մասը: Առանձին դասերի կոնկրետ խնդիրները պետք է դիտարկվեն մյուսների հետ փոխկապակցված: Դասի պլանը կազմելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ մտավոր գործունեության ակտիվությունը նյութի հետ ծանոթացմանը համաընթաց ավելանում է, եթե միաժամանակ աշակերտները կատարում են տվյալ նյութի յուրացմանը օժանդակող առաջադրանքներ, և պահպանվում են հետևյալ պայմանները՝ 1) առաջադրված խնդիրը աշակերտներին մղում է որոշակի մտավոր հնարքի կիրառման 2) աշակերտներն ունեն տվյալ առաջադրանքը կատարելու համար անհրաժեշտ գիտելիքներ, և տվյալ հնարքի կիրառման հմտություններ 3) տվյալ հնարքը համապատասխանում է նյութի բովանդակությանը, և ինչքան շատ է համապատասխանում, այնքան ակտիվացնում է գործունեությունը:

Աշակերտների ինքնուրույն մտավոր գործունեությունը կարելի է ակտիվացնել նաև դիդակտիկ կանոնի կիրառման շնորհիվ, համաձայն որի ուսուցիչն սկզբից ձևակերպում է հստակ առաջադրանք, որը աշակերտները պետք է կատարեն նյութի ուսումնասիրման ընթացքում: Դասի համար առաջադրանք ընտրելիս կարևոր է հաշվի առնել, որ բոլոր աշակերտները պետք է ի զորու լինեն դրանք կատարել, այլապես աշակերտները կկորցնեն ինքնավստահությունը և կնվազի ուշադրությունը: Բոլոր աշակերտները պետք է առաջադրանքի կատարման համար անհրաժեշտ գիտելիքներ, կարողություններ և հմտություններ ունենան, հակառակ դեպքում ոչ բոլոր աշակերտները կմասնակցեն դասարանում կատարվող աշխատանքներին: Բոլոր աշակերտները պետք է համոզված լինեն, որ կկարողանան կատարել առաջադրանքը: Դասի պլանն անհրաժեշտ է կազմել այնպես, որ ուսուցման

պլանավորվող արդյունքները շոշափելի ազդեցություն ունենան ուսուցման որակի բարձրացման վրա և առավել արդյունավետ իրացնեն ուսումնական ծրագրի հնարավորությունները:

Դասի պլանի օրինակ

ԹԵՄԱ. թեմայի անվանումը պետք է համապատասխանի դասագրքին կամ ուսուցչի կողմից մշակված թեմատիկ բաշխմանը: ԴԱՍ № ../.. դասի հերթական համարը և նրա անվանումը դուրս է գրվում ուսուցչի թեմատիկ բաշխման ցանկից:

ԴԱՍԻ ՏԻՊԸ. սահմանում է ուսուցիչը՝ ելնելով դասի նպատակներից և խնդիրներից: Կարող են լինել՝ համակցված դաս, նոր նյութի ամրապնդամն դաս, կրկնման-ընդհանրացման դաս և այլն:

ԴԱՍԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ. Հակիրճ թվարկել կրթական, դաստիարակչական և զարգացնող խնդիրները: Դասի խնդիրներին վերագրել հետևյալ բաղադրիչները՝ Կրթական. · գիտելիքներ (հասկացություններ, երևույթներ, մեծություններ, բանաձևեր, օրենքներ, տեսություններ և այլն) · կարողություններ.

առանձնահատուկ (խնդիրներ լուծել, չափագրումներ անել և այլն) 2. հանրակրթական (մենախոսական և երկխոսական գրավոր և բանավոր խոսք, ուսումնական և լրացուցիչ գրականության հետ տարաբնույթ աշխատանք, գլխավոր նյութի առանձնացում պարզ և բարդ պլանի, նշումների, ալգորիթմի, թեզի, համառոտագրության, գծապատկերի, վերապատմելու, թեմատիկ պատասխանի, համեմատական բնութագրման, զեկույցի տեսքով և այս ամենը սահմանելու կարողություն) · հմտությունը ինքնուրույնության հասցված կարողությունն է:

2. Դաստիարակչական. · բարոյական և էսթետիկական պատկերացումներ, համակարգված աշխարհայացք, վարքի կանոններին հետևելու և օրենքների կատարման կարողություն, · աշակերտի կարիքները, սոցիալական վարքի մոտիվացիան, արժեքները և արժեքային կողմնորոշումը, աշխարհայացքը:

3. Զարգացնող. · Խոսքի, մտածողության զարգացում, աշակերտի զգայունակության (զգայարանների միջոցով արտաքին աշխարհի ընկալման) մակարդակի զարգացում, զգացմունքային-կամային (զգացմունքներ, կամային և ընկալման անհանգստություններ) և կարիք-մոտիվացիոն հատկանիշների զարգացում: · Մտավոր աշխատանք. վերլուծություն, համադրում, դասակարգում, դիտողականություն, եզրահանգումներ անելու կարողություն, օբյեկտների

հատկությունների կարևորում, գործունեության նպատակների և միջոցների առանձնացման կարողություն, արդյունքների ստուգում, փորձի պլան կազմելու ունակություն, վարկածների առաջ քաշում:

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ: Այդ շարքում իրենց տեղն ունեն նաև կրթական տեխնիկական միջոցները՝ պրոյեկտոր, տեսա և ձայնա նվագարկիչներ, հեռուստացույց, համակարգիչ, տեսա և ֆոտոխցիկներ, էլեկտրոնային գրատախտակներ և այլն: Կարելի է այս ցուցակին ավելացնել նաև դիդակտիկ և ցուցադրման համար անհրաժեշտ նյութերը՝ քարտեր, թեստեր, պաստառներ, կինոնկարներ, աղյուսակներ, սկավառակներ և այլն: Գրատախտակը ևս համարվում է դասի համար անհրաժեշտ սարքավորում:

ԴԱՍԻ ՊԼԱՆԸ -գրվում է հակիրճ՝ ըստ դասի հիմնական փուլերի: Հաճախ դասի պլանհամառոտագրության մեջ ներկայացվում է հետևյալ բովանդակությամբ աղյուսակի տեսքով՝

1. Կազմակերպչական մաս— 2-3 րոպե

2. Նոր գիտելիքների հաղորդում — 8-10 րոպե

3. Աշակերտների գործնական աշխատանք — 20-26 րոպե 4.

Տնային առաջադրանքի հանձնարարում— 3-5 րոպե

5. Դասի ամփոփում — 1-2 րոպե Կարելի է նշել նաև այն տնային առաջադրանքը, որն աշակերտները կստանան հաջորդ դասին:

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ դասի պլանի հիմնական բաղկացուցիչ մասն է: Այստեղ ծավալուն ներկայացվում է դասի վարման գործողությունների հաջորդականությունը: Այս բաժինը կարելի է ներկայացնել աղյուսակի տեսքով: Այս բաժնում ներկայացվում է դասի ընթացքը, որտեղ ուսուցիչը ձևակերպում է առանձին տերմինների և հասկացությունների ձևակերպումներ, ծավալուն ներկայացնում է ուսումնական նյութը և պատկերային միջոցների կիրառման հնարքները: Անհրաժեշտ է ուշադիր լինել պատկերներով կառուցվող մեթոդական հնարքների նկարագրման ժամանակ. այն ինչն ուսուցչին դյուրին է թվում, աշակերտների համար հաճախ անհամեմատ դժվար է լինում: Այդ է պատճառը, որ պլանում անհրաժեշտ է որքան հնարավոր է մանրամասն նկարագրել դասարանի հետ աշխատանքի մեթոդաբանությունը: Արդյունավետության տեսանկյունից պետք է մշակել միանգամից մի քանի դասերի պլաններ, ձևակերպել յուրաքանչյուր դասի նպատակը,որը կբխի վերջնարդյունքից և այդ դասի տեղը դասերի համակարգում: Սա հնարավորություն է տալիս

փոխկապակցել տարբեր դասերը և նպաստում է ժամանակի ռացիոնալ տնօրինմանը: Ինչքան միևնույն թեմայի դասերը սերտորեն են կապված միմյանց հետ, այնքան դասն ինքն իրենով ավարտուն կլինի, այնքան աշակերտների գիտելիքներն ավելի խորը կլինեն

Գլուխ 2-րդ Պլանավորման արդյունավետ եղանակների կիրառումը «Շախմատ» առարկայից

Հայաստանի Հանրապետությունում «Շախմատ»-ի՝ որպես ուսումնական առարկայի դասավանդումը յուրատիպ պայմաններ է ստեղծում սովորողների որոշումների ընդունման արագության, ժամանակի և տարածության մեջ փոփոխությունների համարժեք ընկալման, շարժումների կորդինացիայի, ուշադրության կենտրոնացվածության զարգացման համար[4]: Շախմատ առարկայի ուսուցման նպատակն է զարգացնել տարրական դպրոցում սովորողների՝ փոփոխվող, ոչ ստանդարտ իրավիճակներում կողմնորոշվելու, դրանք գնահատելու և լուծման ուղիներ ու տարբերակներ գտնելու կարողությունները, խթանել նրանց որոնողական գործունեությունը, զարգացնել բազմատարբերակային (դիվերգենտ), այլընտրանքային, քննադատական և ստեղծագործական մտածողությունը: Հիմք ընդունելով, որ շախմատ ուսումնական առարկան նպաստում է սովորողների ինտելեկտի զարգացմանը՝ առավելապես կարևորում ենք դրա դերը մտածողության ձևավորման գործընթացում: «Շախմատ» ուսումնական առարկան զարգացնում է կոնվերգենտ ու դիվերգենտ մտածողության ձևերը: Այն հնարավորություն է տալիս մտածել մի քանի հնարավոր քայլերի մասին, գնահատել դրանք և ընտրել լավագույնը:

Շախմատը զարգացնում է մտածողության ֆոկուսային (կենտրոնացած) և դիֆուզ (ցրված) մտածողության ձևերը: Այն հնարավորություն է տալիս որոշ ժամանակ կենտրոնանալ խաղի վրա, ապա մրցակցի քայլի ժամանակ անցնել դիֆուզ մտածողության: Մտածողության երկու եղանակների այս հերթագայումը համարվում է կարևոր՝ ուղեղի արդյունավետ աշխատանքի համար: «Շախմատ» առարկան նպաստում է սովորողների մոտ վերլուծական և քննադատական, ստեղծագործական և այլընտրանքային մտածողության ձևերի զարգացմանը, կանխատեսելու կարողության, իրավիճակների ընթացքի վրա ազդելու ունակության ձևավորմանն ու զարգացմանը, երևակայության և ստեղծագործականութան միջոցով՝ սովորելու կարողության խթանմանն ու կրթության արժևորմանը:

---

[4]Մարտիրոսյան Լ. , Սարգսյան Շ. , «Շախմատ» առարկայի միջոցով հանրակրթության պետական չափորոշչով սահմանված կարողունակությունների ձևավորումը կրտսեր դպրոցական տարիքում, էջ 478:

Առարկայի դասավանդման ընթացքում արդյունավետ կիրառվում են լեզվական մտածողությունը և գրագիտությունը զարգացնելու բազմաթիվ մեթոդներ: Այսպիսով շախմատ առարկայի դասավանդման ընթացքում կարևոր դերակատարում է ունենում « Մտագրոհ»-ը: Այս մեթոդիկայի հեղինակն է Ա. Ֆ. Օսբոռնը: Այն դասի մասնակցային սկիզբ ապահովող լավագույն մեթոդներից մեկն է: Մտագրոհի միջոցով ուսուցիչը դասարանից հավաքում է մտքեր տվյալ թեմայի վերաբերյալ: Ընդ որում՝ մտագրոհի ժամանակ կարևոր է մտքերի քանակը: Կարևոր է նաև, որ աշակերտները առանց երկար մտածելու պատասխանեն ուսուցչի հարցին, որպեսզի ուսուցչի համար պարզ դառնան նաև այն սխալ պատկերացումները, որոնք թեմայի վերաբերյալ ունեն աշակերտները: Ուսուցիչն աշակերտներին առաջարկում է թղթի վրա գրել իրենց մտքերը և հանձնել իրեն: Այս մոտեցումը չի փոխարինում բանավոր մտագրոհին[5]: Մտագրոհի միջոցով մենք վեր ենք հանում սովորողների նախնական գիտելիքները տրված թեմայի վերբերյալ՝ վերլուծելով տրամագիր 1-ը : Հղում ենք մի քանի «բաց» և «փակ» հարցեր: «Բաց» հարցերին պատասխանելու և տարաբնույթ խնդիրներ լուծելու միջոցով սովորողը ձեռք է բերում գիտելիքի, արժեքների, հմտությունների և դիրքորաշումների հիման վրա ըստ իրավիճակի արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձևեր/կարողունակություններ/: Տրված տրամագրի համար կարող ենք հղել հետևյալ հարցերը.



Տրամագիր 1. 4-րդ դասարան, «Դիրքի գնահատում» թեմա [3, 9]

[5] Խաչատրյան Ս. , Ուսուցման արդյունավետ հնարներ, Եր. , 2020, էջ 27:

1) Խաղի ո՞ր փուլն է:
2) Մրցակիցներից ո՞ւմ արքան է ավելի ապահով:
3) Ո՞ր կողմը ունի նյութական առավելություն և որքա՞ն:
4) Ու՞մ խաղաքարերն են ակտիվ և ինչո՞ւ:
5) Ու՞մ զինվորային դասավորությունն է լավը և ինչո՞ւ:

Շախմատ առարկայի դասավանդման ընթացքում կարելի է կիրառել նաև **ԳՈՒՍ համակարգը:** (Գիտեմ, ուզում եմ իմանալ, սովորեցի) : Դասի սկզբում ուսուցիչը գծում է Մ-աձև աղյուսակ, որի ձախ սյունակում գրում է՝ գիտեմ, կենտրոնում՝ ուզում եմ իմանալ, աջ սյունակում՝ սովորեցի բառերը[6]: Առաջադրանքի վերլուծության համար հանձնարարում ենք լրացնել ԳՈՒՍի աղյուսյակը.

Ի՞նչ գիտեմ	Ի՞նչ եմ ուզում սովորել	Ի՞նչ սովորեցի
Սովորողը պետք է լրացնի իր նախնական գիտելիքները խաղի փուլի, դիրքի գնահատման, խաղաքարերի մոտավոր արժեքների, անցունակ զինվորների վերաբերյալ:	Սովորողը պետք է լրացնի իր ակնկալիքները նյութական առավելության իրացման վերաբերյալ:	Սովորողը պետք է կարողանա բացատրել՝ ինչ է որակը, գնահատելով դիրքը՝ հաշվել նյութական հարաբերակցությունը, կազմել պլան՝ նյութական առավելության իրացման համար և գտնել լուծումը

Այսպիով, կիրառելով այս մեթոդները, սովորողը վերջնարդյունքում կարող է գրական հայերենով ազատ գրավոր և բանավոր հաղորդակցվել, մտքերն արտահայտելիս ձևակերպել պարզ հիմնավորումներ, կատարել ընդհանրացումներ և պարզ դասակարգումներ, արտահայտել սեփական մտքերը, զգացմունքները, կարիքները և ցանկությունները, գիտակցել իր յուրահատուկ լինելը: «Շախմատը» սովորողների մոտ զարգացնում է ինքնակազմակերպման, ժամանակի արդյունավետ կառավարման հմտությունները: Կարողանում են արդյունավետ համագործակցել, ռացիոնալ կառավարել ժամանակը, մյուսների հետ սովորել և աշխատել, ինչը նպաստում է սովորել սովորելու կարողունակության ձևավորմանը:

Սովորելու ընթացքում աշակերտները ձևավորում են իրողությունները քննադատաբար և բազմակողմանի ուսումնասիրելու, վերլուծելու, ինչպես նաև ստեղծագործական ու նորարար մոտեցումներ կիրառելու ունակություններ,որոնք ուղղված են կարողունակությունների ձևավորմանը՝ լեզվական գրագիտություն,

[6] Խաչատրյան Ս. , նշվ. աշխ. , էջ 26:

սովորել սովորելու, ինքնաճանաչողական և սոցիալական, ժողովրդավարական և քաղաքացիական, թվային և մեդիա մշակութային, մաթեմատիկական և գիտատեխնիկական, տնտեսական: Սովորողների մոտ ձևավորվում է համակարգային և ինտեգրված մտածողություն[7]: 2-րդ դասարանում դասավանդումը հիմնականում իրականացվում է խաղային ուսուցման մեթոդների կիրառմամբ: Սովորողն արժևորում է գիտելիքի դերը: Դասի առաջին հատվածում ստանում է գիտելիքը, ընկալում այն և դասի երկրորդ կեսին խաղարկում է տարբեր դիրքեր դասընկերների հետ: Աշակերտներին տրվում է այնպիսի հանձնարարաություն որի ավարտին սովորողը դրսևորում է տրամաբանական և ստեղծագործական մտածողություն, հասկանում է իր առջև դրված խնդիրը, մշակում և կատարում է քայլեր այն լուծելու համար, կարևորում է սովորելը և ցուցաբերում է հետաքրքրություն սովորելու նկատմամբ: Շախմատը ազնիվ խաղի կրողն է և կարող է զարգացնել լեզվական գրագիտություն,սովորել սովորելու, ինքնաճանաչողական և սոցիալական, ժողովրդավարական և քաղաքացիական, թվային և մեդիա, մշակութային, մաթեմատիկական և գիտատեխնիկական, տնտեսական կարողունակությունները: Շախմատ առարկայի ուսուցման նպատակն է տարրական դպրոցի սովորողների մոտ խթանել որոնողական գործունեությունը՝ ուղղված փոփոխվող շախմատային իրավիճակներում կողմնորոշվելու, գտնելու շախմատային խնդիրների լուծման տարբերակներ, զարգացնելու սովորողների կոնվերգենտ և դիվերգենտ մտածողությունը, որպես ինտելեկտի կառուցվածքային բաղադրիչ[8]:

Սովորողը կանոններով է շախմատ խաղում և անկախ արդյունքից՝ պետք է արժանապատվորեն շնորհավորի խաղընկերոջը՝ մեկնելով ձեռքը: Սովորողները դրսևորում են հարգանք, ազնվություն և պատասխանատվություն ինչպես սեփական անձի, այնպես էլ այլոց հանդեպ՝ անկախ տարիքից, սեռից, ազգությունից, բարեկեցության աստիճանից, արտաքին տեսքից, ընդունակություններից, մասնագիտությունից, համոզմունքներից և այլ առանձնահատկություններից: Առարկայի դասավանդման ընթացքում կարևոր է նաև աշակերտների մոտ կարողունակությունների ձևավորման գործընթացը ճիշտ կազմակերպել: : Ուսուցիչը պետք է հստակ հասկանա, թե տվյալ դասաժամի ընթացքում հատկապես որ կարողունակությունները կարող է զարգացնել երեխաների մոտ, ինչպիսի հնարավորություններ է ընձեռում տվյալ դասի թեման:

[7]Որոշում N 136-Ն, ընդունող մարմինը՝ ՀՀ կառավարություն, ստորագրող մարմին՝ ՀՀ վարչապետ, 2021 թ. https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788

[8]https://escs.am/files/files/2020-07-29/d33eb400a09b4db41e1aa052810bc8bf.pdf

Առարկայի դասավանդման ընթացքում անհրաժեշտ է կիրառել նորագույն մեթոդներ և եղանակներ: Նոր ՀՊՉ-ով նորագույն մեթոդ է հանդիսանում ուսուցման նախագծային մեթոդը, որը կիրառելով ուսուցիչը կարող է հասնել դրական արդյունքների, քանի որ այստեղ կիրառվում է խմբային աշխատանքի մեթոդը, դասարանի բոլոր աշակերտները մասնկացում են դասընթացին, և ձեռք են բերում և՛ գիտելիքներ և՛ կարողունակություններ: Այս մեթոդի միջոցով սովորողները ներգրավվում են կարճաժամկետ կամ երկարաժամկետ նախագծային աշխատանքներում, որոնք պահանջում են ուսումնական տարբեր առարկաներին առնչվող և իրական կյանքում հանդիպող խնդիրների համալիր լուծումներ: «Շախմատ» ուսումնական առարկայի շրջանակներում նախագծային աշխատանքի օրինակ է 4-րդ դասարանում «Ռազմավարություն» բաժնի «Դիրքի գնահատում, պլան» թեման. ուսուցանելու և կյանքում պլանավորելը սովորողների կողմից արժևորելու նպատակով անց է կացվում «Գնահատումը և պլանավորումը շախմատում և կյանքում» վերնագրով ուսումնական նախագիծ: Ուսուցչի ուղղորդմամբ սովորողների խմբերն ուսումնասիրություններ են անում. օգտվում են համացանցից, գրականությունից, դասագրքերից, հավաքում ամբողջական ինֆորմացիա դիրքի գնահատման և խաղը պլանավորելու վերաբերյալ, զրուցում են բարձրակարգ և փորձառու շախմատիստների, տարբեր մասնագիտությամբ քաղաքացիների հետ: Երեխաները նաև որոնում, գտնում և ներկայացնում են գնահատման և պլանավորման մասին օրինակներ այլ ոլորտներում, հաջողված դեպքեր, պատմություններ: Նախագծային աշխատանքները ներկայացնելիս սովորողները պետք է պատասխանեն գլխավոր հարցին. արդյո՞ք պետք է գնահատել և պլանավորել շախմատային խաղը, արդյոք արժե՞ կյանքում տարբեր նպատակներ իրականացնելիս պլանավորել գործողությունները, թե՞ կարելի է շրջանցել այդ ամենը և իրականացնել առանց պլանի: Նախագծային աշխատանքն իրականացնելիս սովորողները ձեռք են բերում ինչպես շախմատային գիտելիքներ, դիրքը գնահատելու և խաղը պլանավորելու վերաբերյալ կարողություններ, այլ նաև համադրելով գնահատման և պլանավորման օրինակները շախմատում և այլ ոլորտներում՝ հանգում են եզրակացության, որ գնահատելու և պլանավորելու կարևորությունը շատ մեծ է թե՛ կյանքում և թե՛ շախմատում: Նախագծային աշխատանքի ավարտին կրտսեր դպրոցականների խմբերն իրենց աշխատանքները ներկայացնում են տարբեր եղանակներով՝ տեսասահիկներ, իրենց ձեռքերով պատրաստած գրքեր, պաստառներ, շախմատներ, պրոեկտներ:

Վերջնարդյունքում սովորողը կդրսևորի տրամաբանական և ստեղծագործական մտածողություն, կկարողանա անդրադառնալ ու արձագանքել սեփական և ուրիշների ստեղծած աշխատանքին, համատեղ կամ ինքնուրույն կիրականացնի պարզ հետազոտական աշխատանքներ, կօգտվի պարզ թվային սարքերից, համակարգչային ծրագրերից, հավելվածներից, աջակցող սարքերից և սարքավորումներից, կարողանա օգտագործել դրանք՝ պահպանելով անվտանգության կանոնները, օգտագործի տարբեր եղանակներ թեման պատկերավոր և ընկալելի ներկայացնելու համար: Նախագծային աշխատանքի ավելի մեծ արդյունավետության համար անհրաժեշտ է նախագիծը բաժանել որոշակի տրամաբանական փուլերի, որոնց կատարումից հետո սովորողը պարտավոր է անվերապահորեն հաշվետու լինել[9]: Աշխատանքը կազմակերպելիս անհրաժեշտ է մեծ նշանակություն տալ կրտսեր դպրոցական տարիքի երեխաների տարիքային հոգեֆիզիոլոգիական առանձնահատկություններին: Այսինքն աշակերտների աշխատանքի թեմաներն ընտրվում են ուսումնական առարկաների բովանդակությունից կամ դրանց մոտ: Նախագծի կամ հետազոտության խնդիրը, որը ապահովում է ինքնուրույն աշխատանքին միանալու մոտիվացիան, պարտավոր է լինել աշակերտի ճանաչողական հետաքրքրությունների ոլորտում[10]:

«Շախմատ» ուսումնական առարկայի դասավանդման ընթացքում շատ կարևոր է նաև ուշադրություն դարձնել միջառարակայական կապերին, որոնք ևս օգնում են զարգացնել աշակերտների ինքնուրույն մտածելու կարողունակությունները: Միջառրկայական կապերը պետք է հստակ նշվեն նաև դասի պլանում: «Շախմատ» ուսումնական առարկան սերտորեն կապված է մաթեմատիկայի հետ և արդյունավետ զարգացնում է մաթեմատիկական և գիտատեխնիկական կարողունակությունը: «Շախմատ» ուսումնական առական օգնում է սովորողին ճանաչել և պատկերել որոշ երկրաչափական պատկերներ, ունենալ պարզ տարածական պատկերացում: Սովորողը, ուսումնասիրելով շախմատի այբուբենը, կարողանում է ցույց տալ և անվանել խաղադաշտի գծերը և մասերը: Օգտագործում է զինվորի քառակուսին: Մատ երկու փղով՝ օգտագործում է եռանկյունը, մատ նավակով՝ օգտագործում է քառակուսու և ուղղանկյան օրենքը:

Շախմատը հրաշալի կերպով ինտեգրվում է մաթեմատիկայի հետ. քանի որ մաթեմատիկոսի և շախմատիստի մտածելակերպի ձևերը բավականին մոտ են,

---

[9] Горячев А.Д. Все узнаю, все смогу. Пособие по проектной деятельности в начальной школе (2-4 классы) / А.Д. Горячев, Г.А. Иглина. М.: Просвещение, 2010.198 с

[10] Иванова Н.В. Возможности и специфика применения проектного метода в начальной школе / Н.В. Иванова. Екатеринбург: Нач.школа, 2004. 130 с:

ուստի մաթեմատիկական ունակությունները հաճախ զուգորդվում են շախմատային կարողությունների հետ: Բացի դրանից՝ շախմատի խաղադաշտը և խաղն ինքնին հաճախ օգտագործվում են տարբեր մաթեմատիկական հասկացություններ և առաջադրանքներ պատկերելու համար, իսկ շախմատային տերմինները կարելի է հանդիպել կոմբինատորիկայի, գրաֆիկների տեսության, թվերի տեսության, կիրառական մաթեմատիկայի, հետաքրքրաշարժ մաթեմատիկայի, խաղերի տեսության ուսումնական գրականության մեջ[11]:

Ժամանակակից չափորոշչով սահմանվում է,որ ուսուցման պրոցեսը հստակ նպատակներ հետապնդելուց բացի պետք է ունենա հստակ վերջնարդյունքներ: Այսինքն եթե ուսուցիչը որոշակի ժամանակահատվածի համար ինչ-որ նպատակ է դրել, ապա նա պետք է հստակ սահմանի նաև վերջնարդյունքներ,այսինքն պետք է իր նպատակները վերածի դասապրոցեսի և տա հստակ նկատելի վերջնարդյունքներ: Վերջնարդյունքները սահմանված են չափորոշչով և առարկայական ծրագրերով: Ուսուցիչը պետք է դասապլանում առանձին տողով ներկայացնի ակնկալվող վերջնարդյունքները և դասի ավարտին իր համար փաստի, որ իսկապես եկել է այդ վերջնարդյունքներին:

Այսպիսով արդյունավետ դաս պլանավորելու համար նախ պետք է հստակ իմանանք՝ ինչ ենք սովորեցնում և ինչպես: Դպրոցական ծրագրերն ու թեմատիկ պլանները արդեն իսկ տալիս են առաջին հարցի պատասխանը, իսկ թե ինչպես պետք է սովորեցնենք կամ ինչպես ենք սովորեցնում, այդ մասին պատմելու են ուսուցիչների կազմած դասապլանները: Ընդհանրապես արդյունավետ դաս պլանավորելու համար պետք է տիրապետել նյութին, լինել մեթոդապես հարուստ, հստակ իմանալ դասին ներկայացվող պահանջները, նաև գաղափար ունենալ դասի տիպերի, կառուցվածքի, դասի նպատակի, խնդիրների, դասավանդման մեթոդների և դրանց տեսակների վերաբերյալ: Ելնելով այս ամենից՝ արդեն հասկանալի է դառնում, որ դասին անհրաժեշտ է ներկայանալ դասապլանով, որում արտացոլվելու է դասի ամբողջական բովանդակությունը: Դասի արդյունավետ կազմակերպման համար պետք է կազմել դասի պլանը նոր արդյունավետ եղանակների միջոցով, որոնց միջոցով աշակերտը ավելի մատչելի կերպով կընկալի ուսուցանվող թեման:

Այսպիսով կազմում ենք օրվա դասի պլանը, դրան համաձայն կազմակերպում ուսումնական գործընթացը: Պլանավորման ընթացքում մենք պետք է ընտրենք նաև

[11]Пономарев Я.А. Знания, мышление и умственное развитие. М., 1967, էջ 9:

ուսուցման նոր մեթոդներից մեկը, որը մենք կկիրառենք տվյալ թեմայի դասավանդման ընթացքում:

Ուսուցիչ _____ **Ամսաթիվ** _____

Առարկան – Շախմատ		
Դասարանը -II	Ուստարի -2023թ	Կիսամյակը - I
Թեման	Թեմա 1.2	
Դասի թեման	Խաղադաշտ	
Դասի նպատակը	Ուսուցանել շախմատի խաղադաշտը:	
Վերջնարդյունքները	Անվանել շախմատի դաշտերը: Ցուցադրել և անվանել շախմատային գծերը և բաղադրիչները՝ անկյունագիծ, հորիզոնական, ուղղաձիգ, կենտրոնը, թագուհու և արքայական թևերը, սպիտակների և սևերի կիսադաշտերը, եզրերը, անկյունները, սահմանային գիծը : Անվանել և գրանցել դաշտերը:	
Ընդհանրական խաչվող հասկացությունները	Կառուցվածք և գործառույթ. Ամբողջական կառուցվածք ընկալելու հմտության ձևավորում, մասնավորապես՝ անկյունագիծ, հորիզոնական, ուղղաձիգ, կենտրոն, թագուհու և արքայական թևեր, եզրեր, անկյուններ հասկացությունների ընդհանրացում:	
Միջառարկայական կապերը	Մայրենի լեզու.- Նորածանոթ հասկացությունները կարդալու, դրանք մտապահելու, սեփական մտքերը գրագետ, տրամաբանված, համոզիչ և հակիրճ արտահայտելու կարողություն: մաթեմատիկա-Ձևավորել խնդրի պայմանը և պահաջը բացահայտելու և լուծելու կարողություն:	
Դասի խնդիրները	Ուղղորդող հարցերի միջոցով՝ բացահայտել շախմատի խաղադաշտը և դաշտը: Խաղալ ինդարդ. <<Շախմատայ ին բառեր>>: Կազմակերպել աշխատանք զույգերով: Իրականացնել ձևավորող գնահատում: Հանձնարարել տնայ ին աշխատանք:	
Կապը ՀՊՉ-ի հետ	S1,S3,S4,S6,S7,S8,S9,S11,S12,S15,S16,S22,S23,S25,S26,S27,S28,S29,S32,S35	
Անհրաժեշտ նյութեր,	Դասագիրք, տետր, էլեկտրոնային գրատախտակ	

տեխնիկական միջոցներ	
Ձևավորող գնահատում	**Ա.** Անվանում է ,ցույց է տալիս խաղադաշտի դաշտերը,գծերը,մասերը:Տեղորոշում և գրանցում է դաշտերը: **Բ.** Անվանում է ,ցույց է տալիս խաղադաշտի գծերը,մասերը,անվանում է լաբիներեն տառերը: **Գ.** Անվանում է ,ցույց է տալիս խաղադաշտի գծերը: **Դ.** Լսելով անվանումները `ցույց է տալիս խաղադաշտի մասերը և գծերը: **Ե.** օգնությամբ և հուշումով ցույց է տալիս և անվանում խաղադաշտը:

Գործնական մաս

Հետազոտական աշխատանքի ուսումնասիրման ընթացքում կատարել ենք հարցում «Շախմատ» ուսումնական առարկայի դասավանդման ընթացքում պլանավորման արդյունավետ եղանակների կիրառման վերաբերյալ: Հարցումը կատարել ենք ուսուցիչների շրջանակում, փորձելով պարզել ուսուցման նոր մեթոդներից որոնք են ավելի շատ կիրառում դասի պլանավորման ընթացքում: Հարցումը կազմված էր երկու մասից, նախ փորձում էինք պարզել, որքանով է արդյունավետ դասի պլանավորումը, անհրաժեշտ է այն արդյոք դասապրոցեսի կազմակերպման համար, իսկ մյուս մասում հարցման մասնակիցները ներկայացրել են այն մե



թոդները որոնք ավելի շատ են կիրառում դասի պլանավորման ընթացքում:

Հարցման արդյունքները ամփոփելիս պարզ դարձավ, որ ուսուցիչների 85 %-ը կողմ է դասի պլանավորմանը, այն համարելով դասի կարևորագույն բաղկացուցիչ մաս, առանց պլանավորման դասի կազմակերպումը չի կարող արդյունավետ լինել: Հարցման մասնակիցների 15 %-ի կարծիքով դասի պլանավորումը այդքան էլ արդյունավետ չէ, և ուսուցիչը կարող է դասարան մուտք գործել առանց պլանավորման, քանի որ տիրապետում է իր առարկային, և կարող է կիրառել նոր մեթոդներ և միջոցներ դասը ավելի արդյունավետ կազմակերպելու համար:

Հարցման 2-րդ մասում ուսուցիչները նշեցին իրենց կողմից կիրառվող մեթոդները որոնք դասը ավելի արդյունավետ են դարձնում:



Հարցման արդյունքները հետևյալն էր: Ուսուցիչների 30 %-ը կիրառում է մտագրոհ մեթոդը այն համարելով ավելի արդյունավետ, ԳՈՒՍ համակարգը կիրառում է ուսուցիչների 40 %-ը, Նախագծային աշխատանքի մեթոդը, որը նոր է մուտք գործել կրթական համակարգ համարում է արդյունավետ ուսուցիչների 10 %-ը: Ուսուցման ընթացքում նորագույն տեխնոլոգիաների կիրառումը օգտակար է համարում հարցման մասնակիցների 20%-ը: Այսպիսով հետազոտական աշխատանքի ուսումնասիրման ավարտին կարող ենք ասել, որ ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման համար շատ կարևոր դերակատարում ունի դասի պլանավորումը: Դասի պլանավորման գործընթացում, պետք է նաև կարևորությունը տալ նոր մեթոդների և եղանակներին, քանի որ դրանց միջոցով դասապրոցեսը ավելի արդյունավետ է դառնում, և սովորողները ավելի արագ և մատչելի են ընկալում ուսուցանվող նյութը:

Եզրակացություն

Հետազոտական աշխատանքի իրականացման ավարտին մենք հանգել ենք հետևյալ եզրակացություններին:

1. Ուսուցչի մասնագիտական որակներից մեկն էլ դասը ճիշտ պլանավորելն է, որը դասի արդյունավետության բարձրացման կարևոր գործոնն է: Դասի ճիշտ պլանավորման համար անհրաժեշտ է դասի խնդիրների և նպատակների հստակ գիտակցում: Ելնելով զարգացնող կրթության սկզբունքներից՝ ուսուցիչը դասը պետք է պլանավորի այնպես, որպեսզի օգնի աշակերտին ինքնուրույնաբար գիտելիքներ ձեռք բերել: Աշակերտները գիտելիքներ պետք է ստանան ոչ թե պատրաստի ձևով (ուսուցչի հաղորդումից, դասագրքից) այլ ինքնուրույնաբար, որոնողական, հետազոտական կամ համագործակցային աշխատանքի արդյունքում, ինչը աշակերտների մեջ հետաքրքրություն է առաջացնում, դրական վերաբերմունք ձևավորում ուսման նկատմամբ, նպաստում դժվարությունների հաղթահարմանը, խթանում ստեղծագործական մտածողության զարգացմանը: Դասը պլանավորելիս ուսուցիչը պետք է նկատի ունենա և՛ ներկա, և՛ հեռակա խնդիրների լուծումը:
2. Բազմաթիվ են շախմատի ուսուցման առավելությունները: Հատկապես կարևոր է այն, որ շախմատը նպաստում է առանցքային որակների զարգացմանը: ՈՒշադրության կենտրոնացումը, պլանավորումը, դիմացինի քայլերի հաշվի առնելը, տոկունությունը հիմնային որակներ են, որոնց առկայությունը շատ մեծ դեր կարող է ունենալ մարդու կյանքում: Ինչպես ուսումնական այլ առարկաներում, այնպես էլ շախմատի յուրացման ընթացքում աշակերտներն ունենում են նյութի ընկալման դժվարություններ: Շախմատի ուսուցիչը դասի ընթացքում պետք է կիրառի նյութի մատուցման այնպիսի մեթոդներ և միջոցներ, որոնք հնարավորություն կտան աշակերտներին արագ և հեշտ կատարել ուսումնական առաջադրանքները: Կարևոր է հաշվի առնել սովորողների անհատական հոգեբանական և տարիքային առանձնահատկությունները:

Գրականության ցանկ

1. Ամիրջանյան Յու, Սահակյան, Մանկավարժություն, Եր. , 2004:
2. Այվազյան Հ, Դասի կառուցվածքային տարրերի կիրառումը հանրակրթական առարկաների օրվա պլանների կազմման գործընթացում Եր. , 2014:
3. Խաչատրյան Ս. , Ուսուցման արդյունավետ հնարներ, Եր. , 2020:
4. Մարտիրոսյան Լ. , Սարգսյան Շ. , «Շախմատ» առարկայի միջոցով հանրակրթության պետական չափորոշչով սահմանված կարողունակությունների ձևավորումը կրտսեր դպրոցական տարիքում:
5. Որոշում N 136-Ն, ընդունող մարմինը՝ ՀՀ կառավարություն, ստորագրող մարմին՝ ՀՀ վարչապետ, 2021 թ. https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788
6. https://escs.am/files/files/2020-07-29/d33eb400a09b4db41e1aa052810bc8bf.pdf
7. Горячев А.Д. Все узнаю, все смогу. Пособие по проектной деятельности в начальной школе (2-4 классы) / А.Д. Горячев, Г.А. Иглина. М.: Просвещение, 2010:
8. Иванова Н.В. Возможности и специфика применения проектного метода в начальной школе / Н.В. Иванова. Екатеринбург: Нач.школа, 2004:
9. Пономарев Я.А. Знания, мышление и умственное развитие. М., 1967: